

Գ. Ռ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Գրաբարի ֆերականության պատմություն, Երևան, 1974, 557 էջ

Հայագիտության ասպարեզում ընթերցողին է տրամադրվել ակադ. Գ. Ռ. Զահուկյանի ժողովրդի բերականության պատմությունը, ուր ամենայն մանրամասնությամբ քննվում են XVII—XIX դդ. հայ տպագրի բերականությունները:

Մինչ այս աշխատության լույս ընծայումը Գ. Զահուկյանն արդեն կատարել էր գրաբարի բերականական կառուցվածքի ուսումնասիրության շրջանաբաժանում¹:

Նա տարբերում է 3 շրջան՝

1) Հունատիպ բերականությունների (V դ. մինչև XVII դ. սկզբները),

2) Լատինատիպ բերականությունների (XVII դ. սկզբներից մինչև XVIII դ. III քառորդը),

3) Ինքնատիպ բերականությունների (XVIII դ. վերջին քառորդից մինչև մեր օրերը):

Առաջին շրջանին նա նվիրել է առանձին հետազոտություն², իսկ երկրորդ և երրորդ շրջանները (մինչև XIX դ. կեսերը)՝ Լատինատիպ բերականություններից մինչև ինքնատիպ բերականություններ, քննվում են գրախոսվող ուսումնասիրության մեջ:

Լատինական բերականության ազդեցությունը XVII դ. տարածվում էր ոչ միայն հայ, այլև գրեթե բոլոր լեզուների բերականությունների վրա: Դա պայմանավորված է թե՛ մշակութային կապերով, թե՛ կրոնական դրդապատճառներով, հատկապես Հռոմի՝ «Հավատի պրոպագանդայի սուրբ միության» գործունեությամբ, որի նպատակը տարբեր ժողովուրդների կաթոլիկություն քարոզելն էր: Լատինական բերականության հետևորդները որևէ լեզու քննելիս սովորաբար ելակետ էին ընդունում Լատինների համակարգը և Լատինների կանոնները պարտադրում էին մյուս լեզուներին: Հենց այս բնույթի բերականությունները Գ. Զահուկյանը կոչում է Լատինատիպ, որոնք նա դասակարգում է ըստ հետևյալ ուղղությունների.

ա) Տեխնիկական ֆերականություններ (XVII դ. I կես) — ներկայացուցիչներ՝ Ֆր. Ռիվոլա, Կղ. Գալանոս: Այս ուղղության հիմնական նպատակը ուղիղ գրելու և խոսելու կանոններ սահմանելն է: Ի՞նչ Թե՛ Ռիվոլան, թե՛ Գալանոսը կաշկանդված են Լատինների կանոններով, և դա խանգարում է նրանց հստակ տարբերելու գրաբարի իրողությունները (էջ 15, 44): Այնուամենայնիվ, նրանք որոշ նվաճումների հասան. Ռիվոլան նկատում է, որ հայերենը, հակառակ Լատինների, անվանական սեռային տարբերիչներ չունի (էջ 14), Գալանոսը բավականին հաջող խմբավորում է հայերենի հոլովումները (էջ 32), նկարագրում է գերանվանական ու անվանական հոլովաձևերը (էջ 36—40):

բ) Ռացիոնալիստական ֆերականություններ (XVII դ. II քառորդ). ներկայացուցիչներ՝ Ոսկան Երևանցի, Հովհաննես Կոստանդնուպոլսեցի (Հոլով): Այս ուղղության գլխավոր խնդիրը լեզուն ըստ տրամաբանության պահանջների մշակելն է: Ինչպես Ոսկան Երևանցին, այնպես էլ Հովհաննես Հոլովը մեծ տեղ են տալիս արհեստական ռաբիփոխումներին, հատկապես՝ գոյականների, ածականների, բայերի նկարագրության մեջ (էջ 71, 75, 100, 102, 106): Այս ուղղության ներկայացուցիչները բերում են նաև նորություններ. Ոսկան Երևանցին խոսքի մասերը իմաստաբանականից բացի, ենթարկում է նաև ձևաբանական դասակարգման, հենվելով նրանց՝ փոփոխելի կամ անփոփոխ լինելու հատկանիշի վրա (էջ 68): Հովհաննես Հոլովը ճշտորեն բացատրում է հոլովների իմաստները (էջ 95—96), խմբավորում է կանոնավոր ու անկանոն հոլովումները (էջ 98) և այլն:

1 Գ. Ռ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխեման և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 11—26:

2 Գ. Ռ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատություններ հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:

գ) Հուլիս-լատիեադի ֆեոդալեություններ (XVII դ. 30—40-ական թվականներ) — ներկայացուցիչներ՝ Սիմեոն Զուլայեցի, Հովհաննես Զուլայեցի, Խաչատուր Կարենցի, Այս հեղինակները մի կողմից հետևում են ռազմաօրենսդրական քերականության սկզբունքներին, մյուս կողմից՝ օգտվում հունաստիկ քերականություններից, Կարենցի է Սիմեոն Զուլայեցու՝ հոլովումների դասակարգման սկզբունքը. նա տարբերում է հոլովումների երկու խումբ՝ «միայնակ կամ յատուկ հղանակ» հոլովման (իմա՝ անկանոն) և «եղանակ», որք բազում անուանց պատկանին (իմա՝ կանոնավոր)։ Զուլայեցիի տարբերիչ հատկանիշ է համարում ոչ թե ձևերի կանոնավորությունն ու անկանոնությունը, այլ ընդգրկման ծավալը՝ շատ բառեր, թե հզակի դեպքեր ընդգրկելը (էջ 128)։

դ) Լատիեադի-բաղադրական ֆեոդալեություններ (XVIII դ. սկզբից մինչև III բառորդը) — ներկայացուցիչներ՝ Յոհան Երյոդեր, Հակոբ Վիլտ, Միխայիլ Սերաստացի, Բադդասար Դպիր, Այս ուղղության համար բնորոշ է ռազմաօրենսդրական քերականության սկզբունքների որոշ քննադատությունը, ինչպես նաև՝ գրաբարի քերականության շարադրանքը հին տեքստերի ուսումնասիրության վրա հիմնելու պահանջը։

Հայագետներն արդեն ձգտում են ճիշտ նկարագրել հայերենը, Երյոդերը քննադատում է Գալանոսին և Հովհաննես Հոլովին՝ բայական համակարգի մեջ արհեստական ձևեր դնելու համար (էջ 175, 176)։ Միխայիլ Սերաստացին ավելի առաջ տանելով քննադատությունը, գայրույթ է արտահայտում բոլոր արհեստական նորամուծությունների դեմ։ Այս շրջանում աշխուժացում է նկատվում գրաբարի բուն իրողությունների հայտնաբերման ուղղությամբ, Երյոդերը նկատում է հայերենի հավաքական ու անհավանական գոյականները, բացատրում է դրանց իմաստային ու ձևաբանական առանձնահատկությունները (էջ 185)։ Սերաստացին խոնարհման աղյուսակից հանում է բայանունները (էջ 232)։ Ուշագրավ դիտողություններ է անում տարբեր ոճերի մասին (էջ 247)։ Բազմասար Դպիրը բառերը դասակարգում է ըստ իմաստի և ձևի (էջ 269—270) և այլն։

Կարենցի են նաև աշխարհարարի նկարագրության առաջին փորձերը. Երյոդերը ընդունում է Ումբարտաճուղի վրա հիմնված հայերենը, իսկ Սերաստացին՝ Կր ճյուղինը, Հակոբյանը նախորդ հեղինակների արհամարհական վերաբերմունքի, նկատվում է լուրջ գիտական մոտեցում գրաբարից տարբեր լեզվական ձևերի ուսումնասիրության հարցում (էջ 176)։

Այս շրջանի հեղինակներին չի հաջողվում լատինաբանության նորամուծություններից լրիվ հրաժարվել, բայց և այնպես, սրանց գործունեության շնորհիվ պարարտ հող է ստեղծվում ինքնատիպ քերականությունների զարգացման համար։

Ե՛կե՛նատիս ֆեոդալեություններ Գ. Զահուկյանը դասդասում է ըստ հետևյալ ուղղությունների.

ա) Փնեղական ֆեոդալեություններ (1779—1827 թթ.) — ներկայացուցիչներ՝ Միքայիլ Զամչյան, Գարրիել Ավետիսյան, Մեսրոպ Տեր-Հարությունյան, Միքայիլ Սալյանյան։

Այս շրջանում անգիշում պայթար է ծավալվում թե՛ օտար ազդեցությունների, թե՛ արհեստական թարեմիսումներին դեմ։ Պայթարի առաջամարտիկը դառնում է Միքայիլ Զամչյանը, որը գրաբարի քերականությունը վերջնականապես ազատում է հունարանության ու լատինաբանության ավանդույթներից։ Տրամաբանական քերականություններին նա հակադրում է իր՝ մատենագիտական վկայությունների վրա հիմնված էմպիրիկ քերականությունը։ Նա գտնում է, որ լեզուն գործում է ո՛չ թե տրամաբանության օրենքներով, այլ ըստ սովորության և ըստ իր հատկությունների, հետևաբար սխալ է քերականական հարցերում տրամաբանությամբ առաջնորդվելը (էջ 305)։

Զամչյանի քերականությունը, նկատում է գրախոսվող գրքի հեղինակը, նյութի համակարգման և տեսական իմաստավորման առումով կարևոր նորություն չի բերում. նրա արժանիքն այն է, որ «աշխատում է ներկայացնել գրաբարն այնպես, ինչպես կա՝ զերծ օտարամուծ տարրերից և հնարավոր կատարելությամբ» (էջ 307)։

Նշանակալից դեր է կատարում նաև Գարրիել Ավետիսյանի «Քերականութիւն հայկական», որը կարևոր է նախ այն առումով, որ ընդգրկում է Զամչյանի քերականությունից հետո հայտնաբերված ձևաբանության ընթացիկ փաստերը, ինչպես նաև՝ նախորդ քերականական աշխատությունների պատմա-քննական տեսությամբ։

բ) Ընտրողական ֆեոդալեություն (1827—1835 թթ.) — Վրթանես Զալիսյան և Արսեն Այտրեյան։

Զալիսյանի քերականությունը երկու կարևոր առանձնահատկություն ունի. 1) գրաբար օրինակներն այստեղ տրվում են աշխարհարար թարգմանությամբ հանդերձ, 2) թույլ, բայց որոշ

տարբերություն է դրվում դասական և ուշ շրջանի հեղինակների լեզվի մեջ (էջ 392)։

Չարիտանի քերականությունը Ա. Այտընյանը վերահրատարակում է՝ զգալի փոփոխություններով ու հավելումներով։

Հենվելով Հ. Գաթրճյանի, Մ. Գարազաշյանի և սեփական պրպտումների վրա՝ Այտընյանը հստակ տարբերում է զաստկան գրաբարը հետագա շրջանների գրաբարից։ Վերջինիս՝ դասական գրաբարից ունեցած տարբերությունները նա համարում է բնական և արհեստական փոփոխությունների հետեանք։ Բնական փոփոխությունները նա կապում է աշխարհաբարի զարգացման, արհեստականները՝ հունարան և լատինարան նորամուծությունների հետ (էջ 407)։

Այս շրջանի կարևոր նվաճումը դասական և ետդասական գրաբարի սահմանազատումն է և լեզվի զարգացման հարցերում պատմական ըմբռնում հանդես բերելը։

գ) Հավաքողական և քերականություն (XIX դ. կեսեր) — Արսեն Բագրատունի։

Այս քերականությունն ի մի է բերում գրաբարի տարբեր քերականությունների մեջ տրվող բոլոր նվաճումները, և գրաբարի գլխավոր իրողությունների հայտնաբերումն այստեղ ավարտվում է։

դ) Այլալեզու քերականություններ (XIX դ. I կես) — Հարություն Ավգերյան, Շահան Զրպետյան, Մինաս Բժշկյան, Հայնրիխ Պետերման։

Սրանց քերականությունների նպատակը օտար ընթերցողներին գրաբարի ճիշտ նկարագրությունը ներկայացնելն էր։

Այս համառոտ ուրվագիծը, որով ներկայացվեց Գ. Բ. Ջահուկյանի «Գրաբարի քերականության պատմություն» մենագրությունը, հնարավորություն է տալիս նկատելու, որ նրա շրջանաբաժանումներն ու դասադասումները ճշտորեն համապատասխանում են հայ քերականական մտքի զարգացման իրական ընթացքին։ Դրանք, իբրև շղթայի գլխավոր օղակներ, օգնում են հեղինակին ներկայացնելու մտավոր զարգացման մի բարդ ու դժվարին պրոցես։ Բացառիկ օժտվածություն մեծ ըմբռնելով պատմականության խնդիրները, Ջահուկյանը քայլ առ քայլ բացահայտում է մեր քերականագիտության էվոլյուցիան։

Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բաճախիական գիտությունների բեկնածու